



**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

« 11 » օգոստոսի 2021 թ .

ՀՐԱՄԱՆ № 1Մ-150/21

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՌԵԿՏՈՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 1Մ-50/27461-18 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին և 34-րդ հոդվածի 4-րդ մասերով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 2018 թվականի մարտի 16-ի «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների և փաստաթղթերի տրամադրման վճարաչափերը սահմանելու և ռեկտորի՝ 01.12.2013թ. N 1Մ-243 և 20.01.2015թ. N 1Մ-07 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1Մ-50/27461-18 հրամանը շարադրել նոր խմբագրությամբ.

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՒԿՏՈՐԻ՝ 01.12.2013Թ.  
N 1Մ-243 ԵՎ 20.01.2015Թ. N 1Մ-07 ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) կանոնադրության 55-րդ կետի 10-րդ ենթակետով, ԲՊՀ Հոգաբարձուների խորհրդի 02.03.2018թ. N 1 նիստի որոշմամբ և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով սահմանված պահանջները՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. ԲՊՀ կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների և փաստաթղթերի տրամադրման համար սահմանել հետևյալ վճարաչափերը, դրանց տրամադրման ժամկետները, ինչպես նաև կատարող ստորաբաժանումները՝ համաձայն աղյուսակի՝

№	Ծառայություն	Գանձվող գումար	Ժամկետ	Պատասխանատու
1.	ԲՊՀ դիպլոմի կրկնօրինակի տրամադրում՝ կորստի, ոչ ԲՊՀ աշխատակցի կողմից սխալ գրառման, ուսանողի ազգանվան (անվան, հայրանվան) փոփոխության դեպքում	10000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	15 աշխատանքային օր	Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն
2.	ԲՊՀ դիպլոմի և դիպլոմի հավելվածի կամ միջուկի իսկության հաստատում	10000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Ուսումնական բաժին, Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն
3.	ԲՊՀ դիպլոմի ապոստիլ ստանալու համար փաստաթղթերի նախապատրաստում	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Ուսումնական բաժին, Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն

4.	ԲՊՀ դիպլոմի հավելվածի, դիպլոմի միջուկի կրկնօրինակի տրամադրում	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Դեկանատներ, Ընդհանուր բաժին
5.	ԲՊՀ շրջանավարտների դիպլոմի միջուկի թարգմանություն	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	10 աշխատանքային օր	Համապատասխան լեզվի ամբիոն, Ուսումնական բաժին
6.	ԲՊՀ ոչ կրեդիտային համակարգով ուսումնառած շրջանավարտների կամ այլ ուսումնական հաստատություններից բերված գնահատականների փոխարկում (կոնվերտացիա)	10000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Ուսումնական բաժին
7.	ԲՊՀ շրջանավարտներին «Ուսանողի ակադեմիական տեղեկագրի» տրամադրում	3000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Դեկանատներ, Ընդհանուր բաժին
8.	ԲՊՀ շրջանավարտներին «Ուսանողի ակադեմիական տեղեկագրի» տրամադրում օտար լեզվով	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	10 աշխատանքային օր	Համապատասխան լեզվի ամբիոն, Ուսումնական բաժին
9.	ԲՊՀ ուսումնառության փաստը հավաստող արխիվային տեղեկանքի տրամադրում օտար լեզվով	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Համապատասխան լեզվի ամբիոն, Ուսումնական բաժին, Ընդհանուր բաժին
10.	ԲՊՀ ուսումնառության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում՝ ըստ կիսամյակների ցուցաբերած առաջադիմության	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Ընդհանուր բաժին, Ուսումնական բաժին
11.	ԲՊՀ ուսումնառության վերաբերյալ տեղեկանքի տրամադրում օտար լեզվով՝ ըստ կիսամյակների ցուցաբերած առաջադիմության	10000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	10 աշխատանքային օր	Համապատասխան լեզվի ամբիոն, Ուսումնական բաժին, Ընդհանուր բաժին
12.	Առարկայական նկարագրի տրամադրում (ըստ էջերի)	1 էջը՝ 1500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	15 աշխատանքային օր	Համապատասխան ամբիոններ
13.	Ուսանողական գրքույկի կրկնօրինակի տրամադրում	3000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Դեկանատներ, Ուսումնական բաժին
14.	ԲՊՀ աշխատանքային ստաժի (հիմնական, համատեղությամբ,	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Համապատասխան լեզվի ամբիոն, Անձնակազմի

	ժամավճարային) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում օտար լեզվով			կառավարման և զարգացման վարչություն
15.	Համալսարան մուտքի, ելքի պլաստիկ քարտերի կրկնօրինակի տրամադրում	5000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5 աշխատանքային օր	Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն

2. ԲՊՀ-ում սովորող, ԲՊՀ-ից հեռացված (տվյալ ուսումնական տարում) ուսանողին ուսումնառությունը փաստող հայերեն տեղեկանքը, «Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը» տրամադրվում է անվճար:

3. ԲՊՀ աշխատողին (այդ թվում՝ նախկին աշխատողին) աշխատանքային ստաժին (հիմնական, համատեղությամբ, ժամավճարային) վերաբերող հայերեն տեղեկանքը տրամադրվում է անվճար:

4. ԲՊՀ փաստաթղթում աշխատողի կողմից թույլ տրված վրիպակի կամ սխալ գրառման հայտաբերման դեպքում տրվող նոր փաստաթուղթը տրամադրվում է անվճար:

5. Սույն հրամանով սահմանված փաստաթուղթը տրամադրվում է ուսանողին, ԲՊՀ շրջանավարտին կամ աշխատակցին անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նրա ներկայացուցչին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված նոտարական վավերացմամբ լիազորագրի և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

6. Անձը վերոնշյալ փաստաթղթերի և լրացուցիչ ծառայությունների համար ԲՊՀ հաշվապահությունում կամ բանկային հաշվեհամարին կատարած վճարման անդորրագիրը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայացնում է համապատասխան ստորաբաժանմանը և ստանում պահանջված փաստաթուղթը՝ սույն հրամանով սահմանված ժամկետներում:


7. Սույն հրամանի հիման վրա անհրաժեշտ է ԲՊՀ համապատասխան ստորաբաժանումներում ստեղծել հատուկ գրանցամատյան՝ տրված փաստաթղթերի, մատուցված լրացուցիչ ծառայությունների տվյալները գրանցնելու համար:


8. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ԲՊՀ ռեկտորի՝ 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «Համալսարան մուտք գործելու անցումային

քարտերի մասին» N 1Մ-243 և 2015 թվականի հունվարի 20-ի «ԵՊԼՀ-ի ուսանողներին և նախկին շրջանավարտներին տրամադրվող տարբեր տեղեկանքների համար գումար գանձելու մասին» N 1Մ-07 հրամանները:

9. Սույն հրամանը տրամադրել բոլոր ստորաբաժանումներին և փակցնել տեսանելի վայրում՝ ծանոթացման համար:

10. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել ԲՊՀ աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցերով պրոռեկտոր Ս. Մանուկյանին:»:

 Invalid signature

**X** 

---

**ՌԵԿՏՈՐ՝**

Signed by: HARUTYUNYAN KARINE 7401630176 **Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**